

**ԿԱԶՄԱԽՈՍԱԿԱՆ ՆՈՐԱՍՏԵՂԾ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ XII ԴԱՐԻ
ԲԺՇԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ
(ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻ, ԱԲՈՒՍԱՅԻԴ)**

Բանալի բառեր – միջին հայերեն, կազմախոսական տերմին, նորակազմություն, բժշկական տերմինաբանություն, ածանցում, բառաբարդում, բառակապակցություն, բառակապակցական տերմին

Միջնադարյան հայ բժշկագիտության վերելքը, ինչպես գիտենք, սկսվել է XII դարում՝ շնորհիվ Կիլիկիայի բժշկագիտական դպրոցի հիմնադիր ներկայացուցիչ Մխիթար Հերացու: Խոր գիտակ լինելով հունական, արաբական ու պարսկական բժշկության ստեղծած ավանդներին՝ Հերացին «Ջերմանց մխիթարություն» գրքի առաջաբանում մատնանշում է ոչ միայն բժշկության համակողմանի զարգացման իր ծրագիրը՝ կարևորելով հիվանդության կանխորոշումը՝ *նախագիտությունը*, ինչը նա համարում է «իմաստ և վարդապետութիւն բժշկական արուեստից»¹, այլ նաև շեշտը դնում է իր գրվածքը ժողովրդին հասկանալի լեզվով մատուցելու վրա. «Եւ արարի զսա գեղջուկ և արձակ բարբառով, զի դիւրահաս լիցի ընթերցողաց»²: Հերացու այս բժշկարանը ժամանակի խոսակցական լեզվով շարադրված առաջին գիտական աշխատությունն է, որն անփոխարինելի սկզբնաղբյուր է միջին հայերենի բառապաշարի, ինչպես նաև հնչյունական ու քերականական առանձնահատկությունների ուսումնասիրության համար:

«Ջերմանց մխիթարություն» գրքից բացի՝ Հերացին, իր պրակտիկ գործունեությանը զուգընթաց, ստեղծել է նաև մարդակազմության, ախտաբանության, մահճաբուժության ու դեղագործության հարցերին նվիրված մի շարք արժեքավոր գործեր, որոնք, ցավոք, կորստի են մատնվել. միայն որոշ պատահիկներ պահպանվել են հետագա դարերի բժիշկների երկերում: Դրանցից մեկը՝ աչքի կազմախոսությանը նվիրված «Վասն շինուածոյ և յորինուածոյ աչացն» գլուխը, տեղ է գտել Հերացու հետևորդ ասորի բժիշկ Աբուսայիդի «Յաղագս կազմութեան մարդոյն» գրքում³: Նշենք, որ Աբուսայիդի գիրքը

¹ **Հերացի Մ.**, Ջերմանց մխիթարություն, Վենետիկ, 1832, էջ Ա (առաջաբան):

² Նույն տեղում:

³ Տե՛ս **Աբուսայիդ**, Յաղագս կազմութեան մարդոյն, Երևան, 1974: Ս. Վարդանյանի աշխատասիրությամբ և ռուսերեն թարգմանությամբ տպագրված այս բժշկարանը հայագիտական և

հայերենով ստեղծված առաջին կազմախոսական աշխատությունն է¹, որտեղ արտացոլված են մարդու մարմնի կառուցվածքի՝ ուղեղի և նյարդային համակարգի, զգայարանների, ներքին օրգանների, ոսկրերի, հոդերի, մկանների, անոթների մասին պատկերացումները: Ուշագրավ է, որ կիլիկյան շրջանում բժշկության մեջ սկսում են առանձնակի կարևորություն տալ մարդու անատոմիային, և դրա լավագույն վկայությունն են հենց Աբուսայիդի վերոնշյալ գործը և Հերացու՝ մարդակազմությանը նվիրված աշխատանքներից մեզ հասած պատառիկները («Վասն շինուածոյ և եւ յօրինուածոյ աչացն», «Վասն փոշտանկի, որ է ձուանքն»):

Մ. Հերացին և Աբուսայիդը, բուն բժշկական գուծունեություն ծավալելուց բացի, մեծ դերակատարում ունեն հայ բժշկական տերմինաբանության զարգացման գործում: Արաբական բժշկության հզոր ազդեցության ներքո չխուսափելով օտար փոխառություններից՝ նրանք, օգտագործելով մեր լեզվի ներքին հնարավորությունները, միաժամանակ ստեղծել ու կիրառել են զգալի թվով բժշկական տերմիններ: Վերջիններս գոյացել են երեք ճանապարհով.

1. փոխառյալ բառերի (հիմնականում արաբերեն կամ արաբերենի միջոցով փոխառված, ավելի քիչ՝ պարսկերեն, հունարեն) հաճախակի գործածությամբ, ինչպես *բէճ* «թիակ, ուսոսկր», *թուխմայ* «ստամոքսի խցանում», *լուսենիօն* «տեսանյարդ», *խաննիէ* «եղջերաթաղանթ», *կիֆալ* «զարկերակ», *դուլին* «խթաղիք», *մշիմայ* «սաղմը պատող թաղանթ», *պալղամ* «լորձ», *պասպ* «ստամոքսաէլք», *սավտայ* «սև մաղձ», *սաքթա* «կաթված», *սսիսայ* «ջրգողություն», *տասպաղայ* «թաղանթ» և այլն,
2. մեր լեզվում եղած բառերի վերաիմաստավորմամբ (տերմինի արժեքով), ինչպես՝ *աղբիւր* «արտասվալիճ», *անդամ* «օրգան», *առաստաղ* «քիմք», *արկ* «ցանցենի», *բնութիւն* «ներքին օրգաններ», *լեղի* «լեղապարկ», մաշկ «թաղանթ», *ուխտաւոր* «ընկնավոր», *վատութիւն* «հիվանդություն», *քամի* «ցավ» և այլն,
3. հայերենի բառակազմական միջոցներով ստեղծված համարժեք բառերով, ինչպես՝ *աղուեսացաւ* «մազաթափութիւն», *դմուրցաւ* «երակաբորբ», *եղջերենի* «եղջրաթաղանթ», *զանկիկ* «մակալեզու», *խոշորութիւն* «կոշտացում, ուռուցք», *կաղաթուլություն* «անդամալուծություն», *հալումաշ* «հյուծող», *մկնատամ* «որքին», *ջրհեղ* «մեզ», *ստամոքսբերան* «ստամոքսաբերան», *քնատեղ* «քունք» և այլն:

Պետք է նկատել, որ Հերացուն և Աբուսայիդին հաջորդած հետագա դա-

բժշկական գրականության մեջ հայտնի է նաև «Մարդակազմություն» անվանումով: Շարադրանքում այսուհետև համառոտության նպատակով մենք ևս կկիրառենք այն:

¹ Տե՛ս **Վարդանյան Մ.**, Հայաստանի բժշկության պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2000, էջ 125:

րերի բոլոր բժիշկները օգտվեցին ոչ միայն նրանց ստեղծած բժշկագիտական հարուստ ժառանգությունից, այլև հարուստ բառապաշարից: Այս տեսանկյունից կարևորելով XII դարի բժշկարանների տերմինների քննությունը՝ սույն հոդվածի շրջանակներում կներկայացնենք հայերենի բառակազմական միջոցներով ստեղծված կազմախոսական բառերն ու բառակապակցությունները¹ (51 տերմին): Դրանց գերակշռող մասը արձանագրված է «Միջին հայերենի բառարան»-ում² (տեղ չգտածների դեպքում նշվում է)՝ հենց Հերացու և Աբուսայիդի գործերի վկայակոչմամբ, սակայն կան նաև նորակազմություններ, որոնց համար հղում է արվում ավելի ուշ շրջանի հեղինակների:

Հերացին և Աբուսայիդը տերմիններ են ստեղծել երկու ճանապարհով՝ օտար տերմինը թարգմանելով և ինքնուրույն բառ կազմելով: Արժևորելով հատկապես ինքնուրույն բառաստեղծումները՝ նկատենք, որ նրանք նոր բառեր են ստեղծել ածանցման, բառաբարդման և բառակապակցման եղանակներով: Ըստ մեր հաշվումների՝ Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» և Աբուսայիդի «Յաղագս կազմութեան մարդոյն» աշխատություններում ընդհանուր առմամբ կիրառվել է հիսունմեկ կազմախոսական նոր տերմին, որից տասնութը գործածել է Հերացին՝ չնայած իր գործի ավելի մեծ ծավալին, երեսունմեկը (հիմնականում բառակապակցական տերմիններ)՝ Աբուսայիդը, իսկ երկու տերմին՝ *ջրհեղ*, *ստամոքսբերան*, երկու բժշկարաններում էլ հավասարապես կիրառվել են:

XII դարի բժշկարանների նորակազմ տերմինների ստեղծման գործում առավել աչքի է ընկնում **ածանցման եղանակը**, որով կազմված նոր բառերը համալրում են միջին հայերենի բառապաշարը: Կազմախոսական ածանցավոր տերմինները կազմվել են գոյական (պարզ, ածանցավոր և բարդ) + վերջածանց կաղապարով:

Հերացին միայն աչքի կազմախոսության վերաբերյալ ստեղծել է զգալի թվով տերմիններ (11 տերմին, որից 9-ը ածանցմամբ), որոնք, ինչպես արդեն նշեցինք, տեղ են գտել Աբուսայիդի «Մարդակազմության» մեջ: Աչքի թաղանթների և հեղահյութերի համար միայն **-ենի** վերջածանցով բժշկապետը ստեղծել է վեց տերմին՝ **ապիկենի** «ակնագնդի մեջ գտնվող դոնդողանման մասսան, ապակենի» (Աբուս., 181)³, **եղջերենի** «եղջերաթաղանթ» (Աբուս., 182), **խաղողենի** (ելնելով խաղողի կես պտղի նմանությունից) «ծիածանա-

¹ Այս խմբում նպատակահարմար ենք գտել ընդգրկելու նաև օրգանների՝ իբրև կազմախոսական բառերի գործառնություններին վերաբերող երևույթներ և արտագատուկներ նշանակող որոշ բառեր (յոթ բառ)՝ նկատի ունենալով դրանց սերտ առնչությունը այս կամ այն օրգանի հետ:

² **Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ.** Միջին հայերենի բառարան, Երևան, 2009: Տեքստում այսուհետև՝ ՄՀԲ:

³ **Абусаид**, О строении человека, Ереван, 1974, с. 181. Գրքում տեղ գտած բառերի էջերը՝ այդ թվում և Հերացուն պատկանող, այսուհետև կնշվեն փակագծերում՝ Աբուս. համառոտագրությամբ:

թաղանթ» (Աբու., 183), *սատնենի* «ոսպնյակ» (Աբու., 181), *սարդոստենի* «ակնագնդի ներքին պատյանը՝ ցանցենի» (Աբու., 182) և *սպիտակուցենի*: Վերջինս կիրառվել է *ձուի սպիտակուցենի* «ջրային հեղահյութ» (Աբու., 182) բառակապակցային տերմինով, որը ստեղծվել է ձվի սպիտակուցի նմանությունից ելնելով: Այս տերմինը, ի դեպ, արձանագրված չէ ՄՀԲ-ում*:

-**ած** դերբայական վերջածանցով Հերացին կազմել է *խծկած* «բիբի կալնում», *կոշրած* «շաղկապենի», *վաթած* «լուսացրում, բիբի լայնանալուց լույսի ցրվելը» տերմինները, որոնց միջոցով փորձել է բացատրել փոխառյալ տերմինները. «և այս մկունքս... յորժամ չորանան, յիրար ածեն զփող ջրին ծայրն, և խծկի բիբն, և երևնայ զեղ աստան ոռք մի, և այդ է գոր անուանեն *խծկած*»: «Եւ է-րորդ աստառն, որ անուանեն մուլթահիմայ, որ թարգմանի *կոշրած*, և ինքն զետ ծածկոց է, որ... կոշրի ի վերայ աստառացն»: «...նա լոյսն ի դուրս վաթի և ցրուի ընդ ամենայն պտուղն, գոր ինթիշար անուանեն, որ թարգմանի *վաթած*» (Աբու., 185, 183-184, 185):

Նշված տերմիններից բժշկական տերմինաբանության մեջ, ցավոք, պահպանվել են միայն *սպիկենին* և *եղջերենին*, բայց պետք է նկատել, որ Հերացու ստեղծած տերմինների հետևողությամբ՝ *-ենի* վերջածանցով ժամանակակից ակնաբուժության մեջ մտան *անթենի*, *պնդենի* և *ցանցենի* տերմինները¹:

-**աւոր** վերջածանցով Հերացին ստեղծել է *եկաւոր*² կազմախոսական տերմինը՝ «ծղոսկր, ուսագլխից մինչև արմունկ ընկած ոսկոր» իմաստով. «Ապա թէ գլխացավութիւն խիստ լինի, զերկու *զեկաւորսն*՝ որ է ծղին՝ կապէ» (ՄՀՋՄ, 69):

-**իկ, -ուկ** փոքրացուցիչ վերջածանցներով Աբուսայիդի բժշկարանում գտնում ենք *զանկիկ* «լեզվակ, մակալեզու», *միզուկ* «միզանցք» և *կոճուկ* «աճառ» կազմախոսական տերմինները. «Եւ արար աստուած ի խոչակին միս մի որպէս սիւն, որ կոչի *զանկիկ*»: «...և ապա ի դուրս հոսի ընդ *միզուկն*» (Աբու., 218, 140): *Չանկիկ*-ը կազմվել է *զանգ* գոյականից -իկ վերջածանցի հավելմամբ³ (հավանաբար մակալեզվի և զանգակի նմանությունից): Նկատենք, որ երեք տերմիններն էլ կիրառվել են հետագա բժշկարաններում⁴, ընդ որում *կոճուկ*-ի համար ՄՀԲ-ն հղում է Ամասիացուն, մինչդեռ բառը ավելի վաղ գործածել է Աբուսայիդը⁵:

* Միջին հայերենի բառարանում չամրագրված նորակազմ տերմինների ցանկը տե՛ս հոդվածի վերջում:

¹ Տե՛ս Վարդանյան Ս., նշվ. աշխ., էջ 96:

² Հերացի Մ., նշվ. աշխ., էջ 69: Այսուհետև էջերը կնշվեն փակագծերում՝ ՄՀՋՄ համառոտագրությամբ:

³ Տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973, էջ 79: Տեքստում այսուհետև՝ ՀԱԲ:

⁴ Գրիգորիս, Քննություն բնութեան մարդոյն նորին ցաւոց, Երևան, 1962, էջ 99, Ամասիացի Ա., Անգիտաց անպէտ, Վիեննա, 1926, էջ 48, 287, Օգուտ բժշկութեան, Երևան, 1940, էջ 53:

⁵ Բառը գտնում ենք միայն «Յաղագս կազմութեան մարդոյն» գրքի վերջում հրատարակչի կողմից բերվող տերմինների ցանկում, էջ 226:

-**ք** հոգնակերտ վերջածանցով Հերացին կազմել է *խնծոքք* «նշագեղձեր» տերմինը. «բերանոյն առաստաղքն ուռչին և *խնծոքքն*» (ՄՀՁՄ, 66):

-**իք** վերջածանցով *կին* գոյականի հոգնակի սեռական հոլովից Հերացին ստեղծել է *կանացիք* և *կարաս* գոյականից՝ *կարսիք* տերմինները: *Վանացիք* տերմինը բժշկապետը կիրառել է երկու իմաստով՝ «դաշտան» և «կանացի օրգաններ»: Բերենք օրինակներ. «...և այն արիւնն՝ *կանացիսն* է»: «...նա բնութիւնն վարէ զինքն ի դուրս ընդ քիթսն, կամ ընդ նստոյ տեղին, կամ ընդ *կանացիսն*» (ՄՀՁՄ, 78): Նկատենք, որ ՄՀԲ-ում այս տերմինը բերվում է միայն առաջին իմաստով, իսկ երկրորդ իմաստով արձանագրված չէ¹: Հերացու հետևողությամբ տերմինը «դաշտան» իմաստով գործածվել է թարգմանական «Գիրք Վաստակոց» երկում (Վենետիկ, 1877), ապա կիրառվել նաև Ամիասիացու կողմից²:

Ուշագրավ է հատկապես *կարսիք* տերմինը՝ «փոր, ընդերք» իմաստով, որ Հերացին կիրառել է *փոր կարսիք* պատկերավոր բառակապակցության մեջ. «...գիճութիւնն որ ի միսն լինի և ի փոր *կարսիքն*»: «...որ այտոց և խցկումն չայրնէ ի փոր *կարսիքն*» (ՄՀՁՄ, 38, 106):

-**ուք** վերջածանցով արաբերեն *ազո* «դիրտ, մրուր» գոյականից Աբուսայիդը կազմել է *աքուք* «կղանք» բառը. «Այրած արիւնն որպէս մրուր և *աքուք* տայ ի փայծաղն» (Աբուս., 198):

Հերացին և Աբուսայիդը զգալի թվով նոր բառեր են կազմել **բառաբարդման եղանակով**: Դրանց մեջ կազմախոսական տերմինները շատ չեն քանակով և հիմնականում կազմվել են գոյական + գոյական և գոյական + բայ կաղապարներով:

Գոյական + գոյական կաղապարով են ստեղծվել հետևյալ տերմինները.

խոչակափող «կոկորդ». «...նա մինչև ի *խոչակափողն* արիւն գայ» (Աբուս., 194-195):

Ստամոքսբերան «ստամոքսի և կերակրափողի միացման տեղը». «Որ լինի ի *ստամոքսբերանն*»: «Եւ շուրջ ի *ստամոքսբերնին* ջեղ շատ կայ» (ՄՀՁՄ, 145, Աբուս., 142):

Քնատեղ «քունք». «Գլուխն ե ոսկր է, և յամենայն *քնատեղ* ոսկր մի» (Աբուս., 166):

Ականջոռո «ականջի բլթակ». «Ա՛ն աֆիոն և *զականջոռոն* և զքներն օծնէ» (ՄՀՁՄ, 30): Վերջինս կազմվել է *ականջ* և առանձին անգործածական *ոռո* արմատներով (հենց «բլթակ» իմաստն ունի), որ Վանի բարբառում կիրառվում է հենց արմատական ձևով³:

Գոյական + բայ կաղապարով կիրառվել են հետևյալ տերմինները.

¹ Տե՛ս Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 358:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 198:

*Դռնապան*¹ «դրույլ, ստամոքսաւելք». «Բժշկապետքն այնոր բապատասիր ասեն, որ է *դռնապանն*» (Աբու., 143):

Շնչահան «մաշկի ծակոտի». «Երեսն ի վերայ շոգոյն կալ, որ բանայ գաղտ *շնչահանքն*» (ՄՀՁՄ, 68):

Ջրհեղ բառը գործածվել է երկու իմաստով՝ «մեզ» և «միգապարկ», ինչպէս՝ «Լոքին դուրսն, որ օգտէ լերդին, ի յարծուեցն... և յորդէ *ջրհեղն*»: «Չայն ի փուշտն առաքէ, որ իր հետ *ջրհեղին* ելանէ» (ՄՀՁՄ, 145, Աբու., 135): «...զբնութիւն մարդոյն՝ զողուածքն և ջիւսն, զլեղին և *ջրհեղն*, թէ որպէս գոյացան» (Աբու., 118): *Ջրհեղ* գոյականից Աբուսայիդը կազմել է նաև *ջրհեղել* բայը՝ համապատասխանաբար «միգել» նշանակությամբ. «Եւ լինի մարդ, որ չկարէ *ջրհեղել*» (Աբու., 140): Նկատենք, որ բառաբարդմամբ ստեղծված վերոնշյալ տերմինները, բացի *խոչակափող*-ից, կիրառվել են նաև հետագա դարերի բժշկարաններում²:

Ուշագրավ են հատկապես աղիների կազմախոսության վերաբերյալ Աբուսայիդի ստեղծած տերմինները, որոնք, ճիշտ է, չեն դիմացել ժամանակի քննությանը և դուրս են մղվել, սակայն կարևորվում են իբրև XII դարի նորաստեղծ բժշկական տերմիններ: «Աղիք» ընդհանուր հասկացության համար նա գործածել է *աղէճորտ* տերմինը (կազմությունը հստակ չէ), որի հիման վրա արաբերենից բառապատճենմամբ³ նա ստացել է աղիների տեսակների հետևյալ անվանումները՝ *աւար* «կույր աղի», *դռնէրով աղէճորտ* «ստամոքսին կից նրբաղիք, որից սկիզբ են առնում մյուսները» (չկա ՄՀԲ), *երկոտասան* «տասներկու մատնյա աղիք», *ձայնավոր աղէճորտ* «խթաղիք», *մանր աղէճորտ* «բարակ աղի», *ցամաք աղէճորտ* «անաղի», *հիմն և զգայութիւնն աղէճորտացն* «ուղիղ աղիք» (210):

XII դարի, ինչպէս նաև հետագա դարերի բժշկարաններում փոխառյալ կազմախոսական տերմինների կողքին զգալի թիվ են կազմում նաև հայերենով ստեղծված **բառակապակցական տերմինները**, որոնք թեև կազմախոսական հասկացության իմաստն արտահայտում են նկարագրորեն, սակայն կարևորվում են օտար տերմինի հայերեն համարժեքը տալու տեսանկյունից, բացի այդ՝ վերջիններս մատնացույց են անում նաև հայկական բժշկական տերմինների կազմավորման ուղին⁴: Քանի որ մեր քննած բժշկարաններում կիրառված բառակապակցական նորաստեղծ տերմիններն արտահայտում

¹ Այս բառը, որ ստեղծվել է բառապատճենմամբ, կապ չունի գրաբարի համանուն *դռնապան* (դռան պահապան) բառի հետ:

² Տե՛ս **Գրիգորիս**, նշվ. աշխ., էջ 13, 125, 197, Բժշկարան ձիոյ, Երևան, 1980, էջ 68, 133, **Տարթևազի Գ.**, Գիրք Հարցմանց, Կոստանդնուպոլիս, 1829, էջ 241, 243, **Ամասիացի Ա.**, Օգուտ բժշկութեան, Երևան, 1940, էջ 53:

³ Այս մասին տե՛ս **Վարդանյան Ա.**, Հայ բժշկական տերմինաբանությունը XII դարում // «Բանբեր Մատենադարանի», 1971, թիվ 10, էջ 190-191:

⁴ Տե՛ս **Վարդանյան Ա.**, Հայաստանի բժշկության պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2000, էջ 180:

են մեկ ընդհանուր բառային իմաստ, ավելի նպատակահարմար ենք գտնում դրանք նորակազմությունների շարքում դնելը: Բժշկապատմաբան Ս. Վարդանյանը բառակապակցական տերմիններն անվանում է տերմին-նկարագրություն՝ կարծելով, որ դրանք երբեմն պարզունակության են հասնում¹: Չժխտելով նրա մտեցումը՝ միաժամանակ չպետք է մոռանանք, որ Մ. Հերացին, ապա նաև Աբուսայիդը, կարևորելով ժողովրդին հասկանալի լեզվով շարադրելու փաստը, այնուամենայնիվ կարողացան ստեղծել հայերեն նոր կազմություններ, որոնք թեև չամրագրվեցին իբրև բժշկական տերմիններ, բայց երևույթի բացատրությամբ իրենց հերթին նպաստեցին հետագայում սովյալ հասկացությունների համար համապատասխան տերմին ստեղծելու գործին: Այս տեսանկյունից ևս կարևորում ենք բառակապակցական տերմինների լեզվական քննությունը:

Հիմք ընդունելով բժշկարաններում կիրառված բառակապակցական տերմինների բաղադրիչների արտահայտած հարաբերությունը՝ նպատակահարմար ենք գտնում դրանք ներկայացնել երկու խմբով.

1. որոշիչ-որոշյալ հարաբերությամբ կազմված բառակապակցություններ,
2. հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությամբ կազմված բառակապակցություններ:

Հերացու և Աբուսայիդի բժշկարաններում առանձնացրել և քննել ենք **որոշիչ-որոշյալ** հարաբերությամբ կազմված տասներեք բառակապակցական տերմին: Հերացին աչքի կազմախոսությանը վերաբերող ածանցավոր տերմինների կողքին ստեղծել է նաև բառակապակցական *փող ջեղ* «տեսաներվ» (բառացի՝ նյարդի անցք. փող-ի նախնական իմաստն է նեղ անցք)² (Աբուս., 185,186,187), *պինդ մարմին* «աչքի պինդ պատյան» (Աբուս., 179) տերմինները. վերջինիցս հետագայում ընդօրինակելով ստեղծվել է *պնդե-նի*-ն: Ուշագրավ է նաև նրա կիրառած *փոքր փոք* բառակապակցությունը. «Հակթի դեղնուցն՝ ի վերայ *փոքր փոքրոյն* կապէ» (ՄՀՁՄ, 148): ՄՀԲ-ն վերջինիս համար նշում է «փոքրի՝ պորտից ներքև մասը»³ և հղում է XIII դարի բժիշկ Գրիգորիսին, ում «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոյ» բժշկարանում *փոքր փոքր*-ը քանիցս կիրառվել է (8 անգամ)⁴, մինչդեռ տերմինը XII դարում արդեն կիրառված ենք գտնում Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» բժշկարանում:

Պետք է նկատել, որ բառակապակցական կազմախոսական տերմինների ստեղծման գործում առավել աչքի է ընկնում Աբուսայիդը, թեև նրա գործածած բառակապակցությունները հետագա բժշկարաններում չկիրառվեցին

¹ Տե՛ս Վարդանյան Ս., Հայ բժշկական տերմինաբանությունը XII դարում, էջ 194-196:

² Տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. 4, Երևան, 1979, էջ 512:

³ Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 792:

⁴ Տե՛ս Գրիգորիս, նշվ. աշխ., էջ 263:

իմաստի անորոշության պատճառով¹: Այսպես՝ «ավիշ, ավշանոթ» հասկացության համար նա ստեղծել է *կաթ արիւն* բառակապակցությունը, ինչպես՝ «ՇՀ կաթ արիւն յօրինեաց աստուած» (Աբուս., 119): *Ջուր* գոյականն «արտագատանք» իմաստով գործածելով՝ Աբուսայիդը *աղի, լեղի քաղցր* և *հոտած* ածականների հարակցությամբ կազմել է չորս տերմին՝ *աղի ջուր* «արտասուք», *լեղի ջուր* «ծծումք, ականջի արտադրություն», *քաղցր ջուր* «թուրք», *հոտած ջուր* «սերմնահեղուկ»: Բերենք օրինակներ. «*Աղի ջուրն* աչացն է»: «Եւ լեղի ջուրն ականջինն է»: «Եւ քաղցր ջուրն բերանոյն է»: «Եւ հոտած ջուրն ի մէջքն է» (Աբուս., 174): Ի դեպ սրանցից երկուսի՝ *աղի ջուր* և *հոտած ջուր* տերմինների համար Աբուսայիդը զուգահեռ կիրառել է նաև միաբան՝ *արտասուք* և *սերմ* տարբերակները (Աբուս., 174): Ուշագրավ է *արտաքս ելանել* «դուրս ելնել» բառակապակցությունից Աբուսայիդի ստեղծած *արտաքսելն* կազմախոսական տերմինը, որն այս պարագայում նշանակում է «դուրս ելնելու տեղ, ելք», ինչպես՝ «Եւ գայդ ԲԺ-ան դուռդ, գոր ասացաք, ... Բ՝ *արտաքսելն*. Ա՝ ջրհեղն և Ա՝ վերջինն» (Աբուս., 172): Ընդ որում նկատենք, որ Աբուսայիդի բժշկարանի համառոտ իմբագրված տարբերակում այս նույն իմաստով կիրառված ենք գտնում *ելն* տերմինը (Աբուս., 164): Վերոնշյալ *արտաքսելն*-ի հիման վրա Աբուսայիդը ստեղծել է *արտաքսելն առաջին* «միզանցք» և *արտաքսելն վերջին* «հետանցք» (Աբուս., 172) կազմախոսական բառակապակցությունները: Նկատենք, որ թե՛ *արտաքսելն* և *ելն* բառերի տերմինային իմաստները, թե՛ դրանցով կազմված բառակապակցությունները տեղ չեն գտել ՄՀԲ-ում և մյուս բառարաններում: Նույն նկարագրական եղանակով են ստեղծվել նաև *լուծումն ի վայր* «փորլուծութիւն» և *լուծումն ի վեր* «փսխում» տերմինները, ինչպես՝ «Եւ թէ անհալ մնայ կերակուրն, առնէ թուխմայ և դուլինջ և ի վեր և ի վայր *լուծումն*» (Աբուս., 135):

Հատկացուցիչ - հատկացյալ հարաբերությամբ բժշկարաններում կիրառվել է վեց կազմախոսական տերմին: «Կոնք» հասկացությունը Աբուսայիդը արտահայտել է *ծննդոյ տեղ* բառակապակցությամբ. «Բայց կնոջն ՄԾԲ ոսկր, Դ աւելի, որ ի *ծննդոյ տեղին* կայ» (166): Վերջինս գործածվել է նաև *ծննդական տեղի* (146) որոշչային տարբերակով: *Ոտնաթաթ*-ի համար նույն բժշկարանում կիրառվել է *թաթ ոտիցն* բառակապակցությունը. «Ոտքն ի ճուռն ունի Բ, ... ի *թաթ ոտիցն* լե ոսկր» (166): Ուշագրավ են հատկապես «միզապարկ» կազմախոսական հասկացության համար Աբուսայիդի կիրառած *ջրի աման, ջրհեղի աման* և *ջրհեղի տուն* բառակապակցությունները, ինչպես՝ «Յօրինեաց աստուած գփաղաբուշտն *ջրի աման* ամենայն անձին»: «Եւ թէ *ջրհեղին ամանն* տաք լինի և չոր, ջրհեղն դեղին լինի»: «Եւ *ջրհեղին տունն* ծուռ է» (139, 140), որոնցից միայն *ջրհեղի ամանն* է տեղ գտել ՄՀԲ-ում, ընդ որում նկատենք, որ վերջինիս համար հղում է արվում Ամա-

¹ Տե՛ս Վարդանյան Ս., նշվ. աշխ., էջ 186:

սիացուն¹, թեև բառակապակցական այս տերմինը դեռևս XII դարում կիրառել է Աբուսայիդը: *Դրույլ* (ստամոքսի ելքի մասը) կազմախոսական հասկացության համար Աբուսայիդը կիրառել է նաև (*դռնապան*-ին զուգահեռ) եռաբաղադրիչ *ներքին բերան ստամոքսին* բառակապակցությունը. «Եւ երբ կերակուրն և ըմպելին ի ստամոքսն իջանէ, *ներքին բերանն ստամոքսին խփի*» (143):

Ինչպես տեսնում ենք, բերված բառակապակցական բոլոր տերմիններն էլ կազմախոսական հասկացությունների իմաստը արտահայտում են տերմինին ոչ բնորոշ շրջասական, փոխաբերական, անորոշ և ոչ սեղմ կերպով, այդ իսկ պատճառով էլ դրանք իբրև տերմին չկարողացան դիմակայել և հետագայում փոխարինվեցին բուն բառ-տերմիններով, ինչպես ծննդոյ տեղ – կոնք, կաթ արիւն–ավիշ, աղի ջուր–արցունք, ջրհեղի աման–միզապարկ և այլն:

Այսպիսով՝ XII դարի բժշկարանների կազմախոսական տերմինների քնությունը ցույց է տալիս, որ Մ. Հերացին և նրա հետևորդ Աբուսայիդը, արաբական բժշկության հզոր ազդեցության պայմաններում փոխառյալ կազմախոսական երեսուներեք տերմիններին (ըստ մեր հաշվումների) զուգահեռ, մեր լեզվի բառակազմական ներքին միջոցներով ստեղծել և կիրառել են ավելի շատ (հիսունմեկ) նորակազմ տերմիններ՝ ածանցավոր, բարդ և բառակապակցական՝ այդպիսով ցույց տալով հայ բժշկական տերմինաբանության զարգացման ճանապարհը: Դրանցից չորսը *ապակենի, եղջերենի, միզուկ, ստամոքսաբերան*, պահպանվել են հայ բժշկական տերմինաբանության մեջ, իսկ մնացածը, չդիմանալով ժամանակի քննությանը, դուրս են մղվել:

*ՄՀԲ-ում տեղ չգտած նորակազմ տերմինների ցանկ

Կազմախոսական տերմին	նշանակություն	Աղբյուր
արտաքսելն	<i>ելք (օրզանիզմի)</i>	Աբուս., 172
արտաքսելն առաջին	<i>միզանցք</i>	Աբուս., 172
արտաքսելն վերջին	<i>հետանցք</i>	Աբուս., 172
դռներով աղեճորտ	<i>նրբաղիք</i>	Աբուս., 210
թաթ ոտիցն	<i>ոտնաթաթ</i>	Աբուս., 166
ծննդական տեղի	<i>կոնք</i>	Աբուս., 146
կանացիք	<i>կանացի օրզաններ</i>	ՄՀՁՄ 63, 78
ձուի սպիտակուցենի	<i>ջրային հեղահյույթ</i>	Աբուս., 182 (Մ. Հերացի)
ջրի աման	<i>միզապարկ</i>	Աբուս., 139
ջրհեղի տուն	<i>միզապարկ</i>	Աբուս., 140

¹ Տե՛ս Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 674:

Асмик Тадевосян – Новые анатомические термины в лечебниках XII века
(*Мхитар Гераци, Абусаид*)

В статье рассматриваются новые анатомические термины (51 слово), которые употребляли врачи XII века Мхитар Гераци и Абусаид в своих лечебниках «Утешение при лихорадках» и «О строении человека». В период усиления влияния арабской медицины они не только употребляли заимствованные термины, но и создали значительное количество новых терминов, используя внутренние возможности армянского языка. Анатомические термины создавались с помощью суффиксации, словосложения и словосочетания. Большая часть этих терминов оказалась менее устойчивой и вышла из употребления, уступив место новым терминам: только четыре из них (ապակենի, եղերենի, միզուկ, ստամոքսաբերան) вошли в современную армянскую медицинскую терминологию. Однако, по примеру Мхитара Гераци, с помощью частицы «-ени» (-ենի) в современной армянской терминологии были созданы такие термины, как *цанцени* (ցանցենի), *анотени* (անոթենի), *шагкапени* (շաղկապենի), *пндени* (պնդենի).

Hasmik Tadevosyan – New Anatomical Terms in the Medical books of XII Century
(*Mkhitar Heratsi, Abusaid*)

This article studies new anatomical terms (51 words) used by XII century doctors Mkhitar Heratsi and Abusaid in their medical books «Relief for Fevers» and «About the Human Structure». In the period of increasing influence of Arab medicine, they used not only borrowed terms, but also created a significant number of new terms using the inner capabilities of the Armenian language. The anatomical terms were created by means of suffixation, word-formation and word combination. Many of these terms were less stable and went out of use, giving way to new terms: only four of them (ապակենի, եղերենի, միզուկ, ստամոքսաբերան) were included in modern Armenian medical terminology. However, according to the example of Mkhitar Heratsi, new terms were created in the modern Armenian medical terminology with the help of the suffix «eni» (-ենի), such as tsantseny (ցանցենի), anoteny (անոթենի), shaghkapyeny (շաղկապենի), pndeny (պնդենի).